# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

## ՈՒ Ղ Ե Ր Ձ

19-ը հունվարի 2026թ.

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026 թվականի բյուջեի հաստատման որոշման նախագիծը մշակվել է հիմք ընդունելով Եղեգիս համայնքի միջնաժամկետ ծախսային ծրագիրը, 2026թ. տարեկան աշխատանքային պլանի նախագիծը և առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը և հստակությունը:

Համայնքի բյուջեի կառուցվածքը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների և դրանց համապատասխանության ապահովման անհրաժեշտությունից ելնելով բաժանվում է վարչական և ֆոնդային մասերի: Եկամտային կանխատեսումներն ու ծրագրավորումները իրականացվում են յուրաքանչյուր մասերի համար առանձին: Համայնքի բյուջեի պլանավորումն իրականացվել է համեմատական մեթոդով, որի ժամանակ հիմնվել ենք վերջին երեք տարիների ընթացքում փաստացի համայնքային բյուջե մուտքագրված եկամուտների հոսքի և առկա բազաների հիման վրա: Բյուջեն պլանավորված է նպաստելու համար համայնքի համաչափ և կայուն զարգացմանը բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, համայնքային ոչ առևտրային կազմակերպության արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը: Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Եղեգիս համայնքի 2026 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է՝

1.Եկամուտեր 423836.3 հազար ՀՀ դրամ

2.Բյուջետային Ծախսեր 680669.3 հազար ՀՀ դրամ

Համայնքի 2026թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են.

1.Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները:

2.Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքի աշխատակազմի և համայնքային կազմակերպության աշխատանքի արդյունավետությունը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:

3.Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:

4.Համայնքում մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:

5.Եղեգիս համայնքի մասնակցային բյուջետավորման կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:

6. Եղեգիս համայնքի կառավարման ներառականության բարելավումը:

7. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:

8. Կենցաղային թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծմանը:

9. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:

10. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և Եղեգիս համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավումը Ճանապարհաշինության առաջնահերթությամբ համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

13.Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:

14. Եղեգիս համայնքի էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերի ապահովումը:

15.Ոռոգման համակարգերի համակարգի արդիականացումը, նոր համակարգերի ներդրումը գյուղատնտեսության արտադրության բնագավառում:

16.Խմելու ջրի ներքին և արտաքին ցանցի համակարգի արդիականացումը,

17. Ջրահեռացման նոր ծրագրերի իրականացում:

18.Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը:

19.Համայնքի զարգացման համար դոնոր կազմակերպությունների միջոցով նոր ծրագրերի ներգրավում:

20.Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը, Եղեգիս համայնքի կանաչապատման և կանաչ տարածքների պահպանումը:

21.Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծման մեկնարկի ապահովումը:

22.Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:

23.Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:

24.Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

25.Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

26.Արցախից տեղահանված ընտանիքների նկատմամբ առանձնահատուկ ուշադրության և ծրագրերի ապահովում:

27.Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:

28.Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում:

29.Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Համայնքի 2026թ. զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանու անդամներին, Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներին, «Եղեգիսի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի աշխատողներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2026թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային և հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղություններով և ներկայացնում եմ 2026 թվականի բյուջեի նախագիծը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգմամբ՝

***<u>Համայնքի բյուջեի եկամտային մաս. 423836.3</u> հազ. դրամ***

***Հատված 1*** **<u>423836.3</u> հազ. դրամ** որից՝

Անշարժ գույքի հարկ **14400.0** հազ. դրամ,
Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ **40500.0** հազ. դրամ,
Տեղական տուրքեր՝ **1000.0** հազ. դրամ,
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝**331536.3** հազ. դրամ,

Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ **10500.0** հազ. դրամ
Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ **8000.0** հազ. դրամ,
Տեղական վճարներ՝ **11400.0** հազ. դրամ,
Այլ Եկամուտներ(ՀՈԱԿ-ից ստացող)՝ **6500.0** հազ.դրամ

Տարեվերջյան ազատ մնացորդ վարչական **112024.0** հազ.դրամ

Տարեվերջյան ազատ ֆոնդային մնացորդ 144809.2 հազ.դրամ

**<u>Համայնքի բյուջեի ծախսային մաս՝ 680669.5 հազ. դրամ/Հատված 2/</u>**

**01.1.1.51- օրենսդիր եւ գործադիր մարմինների պետական կառավարում՝ 218710.0 հազար դրամ, /Հատված 2/** այդ թվում՝

-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111-149 000.0 հազ. դրամ
-պարգևատրումներ և դրամական խրախուսումներ 4112-5000.0հազ. դրամ
-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր 4211 -100.0 հազ. դրամ
-Էներգետիկ ծառայություններ 4212-5800.0 հազ. դրամ,
-Կապի ծառայություններ 4214-2000.0 հազ. դրամ,
-Ապահովագրական ծախսեր 4215-500.0 հազ. դրամ,
-Ներքին գործուղումներ 4221-1500.0 հազ. դրամ,
-Համակարգչային ծառայություններ 4232 -900.0 հազ. դրամ,
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ-4233-1000.0 հազ.դրամ
-Տեղակատվական ծառայություններ 4234-500.0 հազ.դրամ -
Ներկայացուցչական ծախսեր 4237-500.0
դրամ.դրամ-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 -
1000.0 հազ. դրամ,-Մասնագիտական ծառայություններ
4241- 3000.0 հազ. դրամ,

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-990.0 հազ. դրամ,
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 4252-990.0 հազ. դրամ,
-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-1500.0 հազ. դրամ,
-Տրանսպորտային նյութեր 4264-5000.0 հազ.դրամ,
-Առողջապահական և լաբորասոր նյութեր 4266-500.0 հազ.դրամ,
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267-990.0 հազ. դրամ,
-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-990.0 հազ. դրամ,
-Պարտադիր վճարներ 4823- 1500.0 հազ.դրամ,

-շենքեր և շինությունների վերանորոգում 5113—20000.0 հազ դ

-Տրանսպորտային սարքավորումներ
հազ.դրամ, 5121-950.0

- Վարչական սարքավորումներ
դրամ, 5122-5000.0 հազ.

-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր
հազ.դրամ, 5133-500.0

-Նախագծահետազոտական ծախսեր
դրամ, 5134-2000.0 հազ.

-Հող
հազ.դրամ, 5411--7000.0

**01.3.3- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 2000.0 հազ. դրամ /Հատված 2/**

-Համակարգչային ծառայություններ
դրամ, 4232-2000.0 հազ.

**01.6.1- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 109000,.0 հազ.դ/Հատված 2/**

-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ
հազ.դրամ, 4239 -10000.0

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում
հազ.դրամ, 4251-5000.0

Հատուկ նպատակային այլ նյութեր
դրամ 4269-3000,0 հազ

- Սուբսիդիաներ ֆինանսական պետական(համայնքային) կազմակերպություններին (ՀՈԱԿ-ին հատկացվող)
հազ.դրամ, 4512-23000.0

-Այլ կապիտալ դրամաշնորհներ
դրամ, 4657-15000.0 հազ.

Շենքերի և շինությունների շինարարություն
դրամ 5112 50000 հազ.

Նախագծահետազոտական ծախսեր
դրամ 5134-3000.0 հազ.

**02.2.1 Քաղաքացիական պաշտպանություն 2500.0 հազ. դրամ,**

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ
դրամ, 4239-500.0 հազ.

-Տրանսպորտային նյութեր
դրամ, 4264-500.0 հազ.

-Հատուկ նպատակային այլ նյութեր
դրամ, 4269-500.0 հազ.

-Այլ մեքենաներ և սարքավորումներ
դրամ, 5129-1000.0 հազ.

**04.2.1- Գյուղատնտեսություն 21980.0 հազ. դրամ /Հատված 2/**

-Մասնագիտական ծառայություններ
դրամ, 4241 –990.0 հազ.

Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում
դրամ 4251-990,0 հազ

-Հատուկ նպատակային այլ նյութեր
դրամ, 4269-3000.0 հազ.

-Այլ կապիտալ դրամաշնորհներ
դրամ, 4657-5000.0 հազ.
-Շենքերի և շինությունների շինարարություն
դրամ, 5112- 10000.0 հազ.
-Նախագծահետազոտական ծախսեր
դրամ, 5134- 2000.0 հազ

**04.2.4 -Ոռոգում 65000.0 հազ. դրամ /Հատված 2/**
Ընդհանուր բնույթի ծառայությունն
րամ 4239-2000 հազ դ
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում
դրամ, 4251-5000.0 հազ.
-Հատուկ նպատակային այլ նյութեր
դրամ, 4269-3000.0 հազ.
-Շենքերի և շինությունների շինարարություն
դրամ, 5112- 51000.0 հազ.
--նախագծահետազոտական ծախսեր
դրամ, 5134- 4000.0 հազ

**04.5.1- Ճանապարհային տրանսպորտ 8900,0 հազ. դրամ/Հատված 2/**
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ
դրամ, 4239 – 990.0 հազ.
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-900.0 հազ.դրամ
-Տրանսպորտային նյութեր
դրամ, 4264-5000.0 հազ.
-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-950.0 հազ. դրամ,

**05.1.1- Աղբահանում 17000.0 հազ.դրամ, /Հատված 2/**
-Կոմունալ ծառայություններ
դրամ, 4213 -17000.0հազ.

**05.6.1. -Շրջակա միջավայրի պաշտպանություն 900.0 հազ.դրամ/Հատված 2/**
-Մասնագիտական ծառայություններ 4241-900.0 հազ.դրամ,

**06.3.1 -Ջրամատակարարում 45950.0 հազ. դրամ /Հատված 2/**
-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239-3000 .0 հազ.դր
-Մասնագիտական ծառայություններ 4241-3000.0 հազ. դրամ,
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-950.0 հազ.դրամ
-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-2000.0 հազ.դրամ,
-Շենքերի և շինությունների շինարարություն 5112- 35 000.0հազ. դրամ,
- նախագծահետազոտական ծախսեր - 5134-2000.0 հազ. դրամ,

**06.4.1- Փողոցների լուսավորում 30000.0 հազ. դրամ/Հատված 2/**
-էներգետիկ ծառայություններ 4212-10000.0 հազ. դրամ,
-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239-2000 .0 հազ.դրամ,
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-3000.0 հազ.դրամ
- -Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-2000.0 հազ. դրամ,

- Շենքերի և շինությունների շինարարություն 5112-12000.0 հազ. դրամ
-նախագծահետազոտական ծախսեր 5134-1000.0 հազ. դրամ,

**08.2.4 -Այլ մշակութային կազմակերպություններ-71683.2 հազ.դրամ /Հատված2/**

-այլ տրանսպորտային ծախսեր 4229-900.0 հազ դ
-ներկայացուցչական ծախսեր 4237-500.0 հազ դ
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 3000 .0 հազ. դրամ,
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-1000.0 հազ.դրամ
-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-900.0 հազ. դրամ,
-կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267-3000.0 հազ դրամ
- Հատուկ նպատակային այլ նյութեր 4269– 3000.0 հազ. դրամ,
-Այլ ընթացիկ դրամաշնորհներ 4639- 6000.0 հազ. դրամ,
-Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657-3000.0 հազ.դրամ,
-Շենքերի և շինությունների շինարարություն 5112- 46883.2 .0հազ. դրամ,
նախագծահետազոտական ծախսեր - 5134-3000.0 հազ. դրամ,
-այլ մեքենաներ և սարքավորումներ 5129- 500.0 հազ դ

**10.4.1- Ընտանիքի անդամներ և զավակներ 3000.0 հազ. դրամ/Հատված 2/**

-Այլ նպաստներ 4729-3000.0.դրամ,

**10.7.1- սոցիալական հատուկ արտոնություններ/այլ դասերին չպատկանող/ - 3500.0 հազ. դրամ/Հատված 2/**

-Այլ նպաստներ բյուջեից 4729-3000.0 հազ. դրամ,
-Հողարկավորության նպաստներ բյուջեից 4726-500.0 հազ.դրամ

**11.1.2 -Համայնքների պահուստային ֆոնդ 80546.3** հազ.դրամ

-Պահուստային միջոցներ 80546.3 հազ. դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ